# ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ–ԾՐԱԳԻՐ 2

ՎԱՐԿ ԹԻՎ 2729-ARM

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ԵՎ

## ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2019թ. դեկտեմբերի 31-ին

ավարտված տարվա վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ
Մարտ 2020

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ....3
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍՏԱՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ....6
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ....7
ՀԱՎԵԼՎԱԾ. ԾԱԽՍՈՒՄՆԵՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԸՍՏ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ....21
ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՈՒԴԻՏՈՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ....22

Հեռ.՝+37460 528899
էլ.փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Անհաղթի 23/6, 5-րդ
հարկ, տարածք 7

# ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է "Ճանապարհային դեպարտամենտ" պետական ոչ առևտրային կազմակերպության ("Կազմակերպություն") ղեկավարությանը

*Կարծիք*

Մենք աուդիտի ենք ենթարկել Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) միջև կնքված 2729-ARM վարկային համաձայնագրով (Վարկային Համաձայնագիր) ֆինանսավորվող և Կազմակերպության կողմից իրականացվող "Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի–Ծրագիր 2"-ի (Ծրագիր) հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա դրամական միջոցների ստացումների և ծախսումների հաշվետվությունը, ինչպես նաև հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփը և այլ ծանոթագրությունները:

Մեր կարծիքով, հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ծրագրի 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն "Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով" Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտի (ՀՀՀՀՄՍ-դրամային միջոցների սկզբունք):

*Կարծիքի հիմք*

Մենք աուդիտն իրականացրել ենք Հաշվապահների Միջազգային Դաշնության (ՀՄԴ) ներքո գործող Աուդիտի և Երաշխավորման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ԱԵՄՍԽ) կողմից հրապարակված Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:
Մենք անկախ ենք Ծրագրից և Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

*Հանգամանքի շեշտադրում – Դրամային միջոցների սկզբունքով հաշվետվությունների պատրաստում*

Առանց ձևափոխելու մեր կարծիքը, Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից ծնթ. 2-ին, որտեղ ներկայացված է, որ այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են դրամային միջոցների սկզբունքով, որի պատճառով, այս հաշվետվությունները կարող են չհամապատասխանել այլ նպատակներով օգտագործման համար:

*Հանգամանքի շեշտադրում – Ծրագրի իրականացման դանդաղ ընթացք*

Առանց ձևափոխելու մեր կարծիքը, Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ծնթ. 7-ին, որը ներկայացնում է Ծրագրի իրականացման դանդաղ ընթացքի հանգամանքները, և այդ ուղղությամբ Ծրագրի ղեկավարության կողմից ձեռնարկված քայլերը:

Բի-Դի-Օ Արմենիա ՓԲԸ-ն հանդիսանում է բրիտանական Բի-Դի-Օ Ինթերնեյշնլ Լիմիթեդ ընկերության անդամ և Բի-Դի-Օ անկախ ընկերությունների միջազգային ցանցի անդամ:

*Հանգամանքի շեշտադրում – COVID-19*

Մենք Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրություն 15-ի վրա, որը նկարագրում է հաշվետու ամսաթվից հետո COVID-19 տարածման հնարավոր ազդեցությունը Ծրագրի վրա: Մեր կարծիքը չի ձևափոխվել այդ հանգամանքի առնչությամբ:

*Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար*

Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է ՀՄԴ-ի Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՄԽ) կողմից հրապարակված "*ՀՀՀՀՄՄ-դրամարկղային միջոցների սկզբունք*" ստանդարտի և ԱՋԲ-ի կողմից հրապարակված "Վարկի վճարման ձեռնարկին" (լրամշակված) համաձայն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ղեկավարության կարծիքով, անհրաժեշտ է՝ խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած լինելու հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացրած աուդիտը միշտ կհայտնաբերի բոլոր էական խեղաթյուրումները, երբ նրանք առկա են: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություններ և պահպանում մասնագիտական կասկածամտություն:

Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտմաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ՝ Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Մենք, ի թիվս այլ հարցերի, ղեկավարությանը տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

***Եզրակացություն իրավական այլ պահանջներին համապատասխանելու վերաբերյալ***

Վարկային Համաձայնագրի պահանջների պահպանման նպատակով, Կազմակերպության ղեկավարությունը պետք է ապահովի, որ.

1. Վարկային միջոցները օգտագործվել են Վարկային Համաձայնագրի և ԱԶԲ-ի կողմից հրապարակված "Վարկի վճարման ձեռնարկին" (լրամշակված) համապատասխան՝ պատշաճ ուշադրություն դարձնելով տնտեսմանը և արդյունավետությանը, և միայն այն նպատակներով, որոնց համար հատկացվել են:
2. ՀՀ Կառավարության համաֆինանսավորումը հատկացվել է և օգտագործվել է Վարկային Համաձայնագրի համապատասխան, և միայն այն նպատակներով, որոնց համար հատկացվել են:
3. Վարկային Համաձայնագրի Բաժին IV-ում նշված ֆինանսական վավերապայմանները պահպանվել են:
4. Աշխատանքները և ծառայությունները ձեռք են բերվել Վարկային Համաձայնագրի համապատասխան:

Մեր կարծիքով, 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Կազմակերպության ղեկավարությունը պահպանել է նշված պահանջները:

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ
31 մարտի, 2020թ.

Վահագն Սահակյան, FCCA
Տնօրեն

Գնել Խաչատրյան, FCCA
Աուդիտոր

BDO

## ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍՏԱՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 2*
*ԱԶԲ վարկ թիվ 2729-ARM*
*2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ*

| | Ծնթ. | Հաշվետու տարի 2019թ. USD | Կուտակային առ 31.12.2019թ. USD |
|---|---|---|---|
| **Ֆինանսավորում** | | | |
| ԱԶԲ 2729-ARM վարկի ֆինանսավորում | 10 | 643,879 | 110,017,341 |
| Հայաստանի Հանրապետության համաֆինանսավորում | | 202,781 | 18,625,019 |
| **Ընդամենը ֆինանսավորում** | | 846,660 | 128,642,360 |
| **Ծախսումներ** | 8 | | |
| Աշխատանքներ | | - | 96,943,456 |
| Խորհրդատվական ծառայություններ | | 643,879 | 9,073,885 |
| Տոկոսագումար | | - | 4,000,000 |
| Հարկեր, տուրքեր | | 190,700 | 18,044,586 |
| Այլ աշխատանքներ (Գովազդային վահանակների ապամոնտաժում) | | - | 146,899 |
| Այլ խորհրդատվական ծառայություններ | | 11,933 | 16,913 |
| **Ընդամենը ծախսումներ** | | 846,512 | 128,225,739 |
| Փոխարժեքային օգուտ (կորուստ) | | 74 | (415,649) |
| **Դրամական միջոցների զուտ աճ** | | 222 | 972 |
| Դրամական միջոցների սկզբնական մնացորդ | 11 | 750 | - |
| **Դրամական միջոցների վերջնական մնացորդ** | 11 | 972 | 972 |

*Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են "Ճանապարհային դեպարտամենտ" պետական ոչ առևտրային կազմակերպության ղեկավարության կողմից 2020թ. մարտի 31-ին: Կից ծանոթագրությունները ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են:*

**Քրիստինե Ղալեչյան**
Գլխավոր տնօրենի Ժ/Պ

**Նարինե Միքաելյան**
Ֆինանսական կառավարման և հաշվապահական հաշվառման բաժնի պետ / Գլխավոր հաշվապահ

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 2*
*ԱԶԲ վարկ թիվ 2729-ARM*
*2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ*

### 1. Ընդհանուր տեղեկություններ

#### *1.1. Ծրագրի ֆինանսավորումը*

Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) միջև 2009թ. սեպտեմբերի 15-ին ստորագրված Շրջանակային ֆինանսավորման համաձայնագրով ԱԶԲ-ն համաձայնել է Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի ֆինանսավորման նպատակով ՀՀ-ին տրամադրել բազմափուլ (բազմատրանշային) վարկավորում՝ 500 միլիոն դոլար ընդհանուր գումարով:

ԱԶԲ-ն Բազմափուլ Ֆինանսական Գործիքի (ԲՖԳ) ներքո վարկերը տրամադրում է ըստ առանձին ծրագրերի՝ տրանշերի, երբ վերջիններս պատրաստ կլինեն ֆինանսավորման համար՝ համաձայնագրով սահմանված պահանջների բավարարման դեպքում: Յուրաքանչյուր վարկ հանդիսանում է առանձին տրանշ: Տրանշերը կարող են ունենալ տարբերվող ֆինանսավորման պայմաններ, տրամադրվել միաժամանակ կամ հաջորդաբար:

ՀՀ-ի և ԱԶԲ-ի միջև 2011թ. մայիսի 30-ին ստորագրված "Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր – Ծրագիր 2 (հատուկ գործողություններ)" (Ծրագիր, կամ Տրանշ-2) վարկային համաձայնագրի համաձայն՝ ԱԶԲ-ն ՀՀ-ին է տրամադրել *170,000,000* ԱՄՆ դոլար գումարով 2729-ARM վարկը: Վարկը տրամադրվել է իրականացնելու երկրորդ տրանշի ֆինանսավորումը:

Համաձայն ՀՀ Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և ԱԶԲ-ի միջև 17.06.2016թ. նամակ-համաձայնագրի՝ կատարվել է ԱԶԲ 2729-ARM վարկային միջոցների վերաբաշխում, ինչի արդյունքում 6,000,000 ԱՄՆ դոլար հատկացվել է Տրանշ 1-ի իրականացմանը:

Համաֆինանսավորումը տրամադրվում է ՀՀ պետական բյուջեի միջոցներից: Համաֆինանսավորումը տրամադրվում է ֆինանսավորելու ՀՀ օրենքներով պահանջվող հարկերը և տուրքերը:

Տրանշ 2-ի տրամադրման վերջնաժամկետ է սահմանվել 2023թ. դեկտեմբերի 31-ը (թարմացված):

#### *1.2. Ծրագրի նպատակները*

2729-ARM վարկային համաձայնագրով իրականացվող Ծրագրի նպատակներն են.
- Միջպետական ճանապարհային տրանսպորտի տրանզիտի հեշտացում,
- առևտրային հոսքերի և մրցակցայնության մեծացում,
- տրանսպորտի ծախսերի նվազեցում,
- շուկաների, աշխատանքների և սոցիալական ծառայությունների մոբիլություն և հասանելիություն,
- կառավարման բարելավում:

Ծրագրի բաղադրիչներն են.
- Աշտարակ-Թալին 41.3 կմ երկշարք ճանապարհի վերակառուցում և լայնացում քառաշերտի;
- Խորհրդատվական ծառայություններ և ծրագրի կառավարում ներառյալ

ուսումնասիրությունների նախապատրաստում և Ներդրումային Ծրագրի շրջանակներում ֆինանսավորվող հետագա ծրագրերի մանրամասն նախագծում, շինարարական աշխատանքների վերահսկողություն, մրցութային փաստաթղթերի պատրաստում, գնումների իրականացում և կարողությունների զարգացում:

*1.3. Ծրագրի բյուջեն*

Ծրագրի թարմացված բյուջեն կազմում է 204,000,000 ԱՄՆ դոլար (USD) գումար:

Հայաստանի Հանրապետության հարկային օրենքներով պահանջվող հարկերը և տուրքերը Վարկային միջոցներից չեն վճարվում: Վերջիններս կատարվում են Հայաստանի Հանրապետության համաֆինանսավորման հաշվին:

| Կատեգորիա | ԱԶԲ Վարկ 2729-ARM /Ծրագիր-2/ | | | Հայաստանի Հանրապե-տություն | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| | Նախնա-կան | Վերաբաշխ-ված* | Թարմացված | | |
| | USD | USD | USD | USD | USD |
| Աշխատանքներ | 149,700,000 | - | 149,700,000 | - | 149,700,000 |
| Խորհրդատվական ծառայություններ | 7,000,000 | 3,000,000 | 10,000,000 | - | 10,000,000 |
| Տոկոսագումար | 10,000,000 | (6,000,000) | 4,000,000 | - | 4,000,000 |
| Այլ (ներառյալ տեղական հարկեր) | - | - | - | 32,000,000 | 32,000,000 |
| Չբաշխված | 3,300,000 | (3,000,000) | 300,000 | 8,000,000 | 8,300,000 |
| Ընդամենը | 170,000,000 | (6,000,000) | 164,000,000 | 40,000,000 | 204,000,000 |

(*) ԱԶԲ 2729-ARM Վարկի Աշխատանքներ կատեգորիայից 6,000,000 ԱՄՆ դոլար նախատեսվել է ծախսել Ծրագիր 1-ի Աշխատանքների համար:

### *1.4. Ծրագիրն իրականացնող հաստատություն*

Ծրագիրը իրականացվում է "Ճանապարհային դեպարտամենտ" պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից (Կազմակերպություն): Կազմակերպությունը "Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն" ՊՈԱԿ-ի և "Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ" պետական հիմնարկի իրավահաջորդն է: Վերակազմավորումը կատարվել է համաձայն ՀՀ Կառավարության 15.12.2016թ. թիվ 1304-Ա որոշման:

Կազմակերպությունը իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որի կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմինը մինչև 2019թ. հունիսի 20-ը Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունն էր, իսկ դրանից հետո համաձայն ՀՀ Կառավարության 06.06.2019թ. թիվ 733-Ն որոշման՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը:

Կազմակերպության հիմնական նպատակն է ՀՀ-ում տրանսպորտի ոլորտի ծրագրերի արդյունավետ իրականացման ապահովումը, ներառյալ՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի և Հյուսիսային միջանցքի արդիականացման ծրագրի աշխատանքների իրականացումը:

Կազմակերպության գրանցման հասցեն է՝ ՀՀ, Երևան, Նալբանդյան փողոց 28, իսկ գործունեության հասցեն՝ ՀՀ, Երևան, Տիգրան Մեծի փողոց 4, հարկ 7:

### *1.5. Հողերի Օտարման և Տարաբնակեցման Ծրագիր (ՀՕՏԾ)*

Ծրագրի կարիքների համար անհրաժեշտ հողամասերը ճանաչվում եմ հանրության գերակա շահ և օտարվում են նախնական համարժեք փոխհատուցմամբ՝ առաջնորդվելով ՀՀ օրենքի և ԱԶԲ Սոցիալական պաշտպանության քաղաքականության (2009թ.) պահանջներով: ՀՀ Կառավարության 2012թ. սեպտեմբերի 6-ի թիվ 1139-Ն որոշմամբ հաստատվել է Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 2 (Աշտարակ-Թալին) ճանապարհահատվածի հողերի օտարման և տարաբնակեցման ծրագիրը:

ՀՕՏԾ-ն ամբողջությամբ ֆինանսավորվում է ՀՀ Կառավարության միջոցներից: ՀՕՏԾ-ի արժեքը սահմանվել էր 2,304,485 հազար ՀՀ դրամ: 2012թ. ՀՀ Կառավարության կողմից գումարն ամբողջությամբ տրամադրվել է Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրերի իրականացման կազմակերպությանը: ՀՀ Կառավարության 12.06.2014թ.-ի թիվ 603-Ն որոշմամբ, ՀՕՏԾ-ի ֆինանսավորման համար 21.07.2014թ.-ին լրացուցիչ հատկացվել է 958,826 հազար դրամ գումար:

ՀՀ կառավարության 23.05.2019թ. N 626-Ն որոշմամբ՝ Աշտարակ-Թալին ճանապարհահատվածի կմ 40+000-կմ 47+400 հատվածի վրա առկա հաղորդակցուղիների տեղափոխման համար անհրաժեշտ հողամասերը ճանաչվել են հանրության գերակա շահ:
ՀՀ կառավարության 20 հունիսի 2019 թվականի N 777-Ն որոշմամբ՝ Աշտարակ-Թալին ճանապարհահատվածի կմ 37+544.68-կմ40+000 և կմ 47+400-կմ 71+500 հատվածների վրա առկա հաղորդակցուղիների տեղափոխման համար անհրաժեշտ հողամասերը ճանաչվել են հանրության գերակա շահ:

Օտարվող սեփականության տեղազննման, չափագրման, գույքագրման և գնահատման համար «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի և «Ափթայմ» ՍՊԸ միջև 15.11.2018թ. կնքվել է խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագիր: Ներկայում արդեն իսկ ավարտվել են ՀՀ Արագածոտնի մարզի Ագարակի համայնքի մոտ հնագիտական տեղանքը շրջանցող մոտ 8 կմ ճանապարհահատվածի (կմ 29+600-կմ 37+544.68)

օտարման գոտու սահմաններում գտնվող օտարվող սեփականության և Աշտարակ-Թալին ճանապարհահատվածի կմ 40+000-կմ 47+400 հատվածի վրա առկա հաղորդակցուղիների տեղափոխման համար անհրաժեշտ օտարվող սեփականության տեղազննման, չափագրման, գույքագրման և գնահատման աշխատանքները:

Օտարվող սեփականության օտարման գործընթացն իրականացնելու նպատակով «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի և «Մեղիա- Մոդել» ՍՊԸ միջև 15.11.2018թ. կնքվել է խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագիր: Ներկայում մշակվում են ՀՀ Արագածոտնի մարզի Ագարակի համայնքի մոտ հնազիտական տեղանքը շրջանցող մոտ 8 կմ ճանապարհահատվածի (կմ 29+600-կմ 37+544.68) օտարման գոտու սահմաններում գտնվող օտարվող սեփականության և Աշտարակ-Թալին ճանապարհահատվածի կմ 40+000-կմ 47+400 հատվածի վրա առկա հաղորդակցուղիների տեղափոխման համար անհրաժեշտ օտարվող սեփականության օտարման պայմանագրերի նախագծերը ՝ ազդեցության ենթակա անձանց ուղարկելու նպատակով: Նշված օտարվող սեփականության օտարման գործընթացը սկսելու (օտարվող սեփականության օտարման պայմանագրերի նախագծերն ազդեցության ենթակա անձանց ուղարկելու) վերջնաժամկետն է ՝ 2020 թվականի նոյեմբերի 1-ը:

2019թ.-ին ՀՕՏՁ-ի գծով ծախսերը կազմել են 769 հազար դրամ (2018թ.-ին՝ 72,809 հազար դրամ):

| | 2019թ. |
|---|---|
| | Հազ. ՀՀ դրամ |
| Ֆինանսավորում ՀՀ պետական բյուջեից | 1,000.00 |
| | |
| Ծախսումներ ՀՀ պետական բյուջեից | 769.50 |
| | |
| Դրամական միջոցների վերջնական մնացորդ | 230.50 |

## 2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ

### *2.1 Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և ներկայացում*

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՍԽ) կողմից հրապարակված "ՀՀՀՀՄՍ-դրամարկղային մեթոդի սկզբունք" ստանդարտի և ներկայացված է Ասիական Զարգացման Բանկի կողմից հրապարակված "Վարկի վճարման ձեռնարկին" (լրամշակված) համապատասխան:

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

### *2.2 Հաշվապահական հաշվառման դրամարկղային մեթոդի սկզբունք*

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել և ներկայացվել են կիրառելով հաշվապահական հաշվառման դրամարկղային մեթոդի սկզբունքը:
Հաշվապահական հաշվառման դրամարկղային մեթոդի սկզբունքի կիրառման դեպքում գործարքները և այլ դեպքերը ճանաչվում են միայն այն դեպքում, երբ դրամական միջոցը կամ համարժեքը ստացվել է կամ վճարվել:
Դրամարկղային մեթոդի սկզբունքով պատրաստված ֆինանսական հաշվետվությունները տրամադրում են տեղեկատվություն ժամանակաշրջանում ստացված դրամական միջոցների, դրամական միջոցների օգտագործման ուղղությունների և հաշվետու ամսաթվի դրությամբ դրամական միջոցների մնացորդների վերաբերյալ:

### *2.3 Ներկայացման արժույթը*

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը ԱՄՆ դոլարն է (USD):

### *2.4 Գործարքներ արտարժույթով*

Արտարժույթը Ծրագրի ներկայացման արժույթից տարբերվող արժույթն է:
Ծրագրի բանկային հաշիվները վարվում են և գործարքները իրականացվում են ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով: ՀՀ դրամով արտահայտված գործարքները փոխարկվում են ԱՄՆ դոլարի հետևյալ կերպ.

- ՀՀ դրամով արտահայտված Հայաստանի Հանրապետության հատկացումները և դրանց հաշվին կատարված ծախսումները ներկայացվում են ԱՄՆ դոլարով՝ կիրառելով գործարքի նախորդ օրվա դրությամբ հայտարարված արտարժույթի փոխարկման փոխարժեքը,
- ՀՀ դրամով արտահայտված Ասիական Զարգացման Բանկի ֆինանսավորման հաշվին իրականացվող վճարումները կապալառուներին և այլ մատակարարներին ներկայացվում են ԱՄՆ դոլարով՝ կիրառելով Ասիական Զարգացման Բանկի կողմից արտարժույթի գնման փաստացի փոխարժեքը:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հայտարարված փոխարժեքն է՝ 1 ԱՄՆ դոլար = 479.70 դրամ (31.12.2018՝ 1 ԱՄՆ դոլար = 483.75 դրամ):

### *2.5 Դրամական միջոցներ*

Դրամական միջոցները բաղկացած են բանկային հաշիվների մնացորդներից:

*2.6 Հարկեր*

Օրենքով պահանջվող բոլոր հարկերի վճարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությանը համաձայն:

*2.7 Բյուջե*

Ծախսերի բյուջեն կազմվում է նախորդ ժամանակաշրջանի փաստացի կուտակային ծախսերին գումարելով հաշվետու ժամանակաշրջանի թարմացված բյուջեն:

## 3. Վարկային միջոցների մասհանման հաշվետվություն

*ԱԶԲ վարկ թիվ 2729-ARM*
*ԱՄՆ դոլար*

| Դիմումի համար | Վճարման ամսաթիվ | Ծախսային հոդված | |
|---|---|---|---|
| | | Խորհրդատվական ծառայություններ | Ընդամենը |
| | | 02 | |
| WA00083 | 20/05/2019 | 75,300.00 | 75,300.00 |
| WA00084 | 09/04/2019 | 9,880.14 | 9,880.14 |
| WA00085 | 20/05/2019 | 44,800.07 | 44,800.07 |
| WA00086 | 20/05/2019 | 94,800.00 | 94,800.00 |
| WA00087 | 05/08/2019 | 291,224.00 | 291,224.00 |
| WA00088 | 12/08/2019 | 10,604.63 | 10,604.63 |
| WA00089 | 21/08/2019 | 26,628.40 | 26,628.40 |
| WA00090 | 24/09/2019 | 28,700.00 | 28,700.00 |
| WA00091 | 08/11/2019 | 22,083.18 | 22,083.18 |
| WA00092 | 13/12/2019 | 39,858.55 | 39,858.55 |
| | | 643,878.97 | 643,878.97 |

## 4. Ծրագրի միջոցների վերաբերյալ հաշվետվություն

Ծրագրի միջոցների վերաբերյալ հաշվետվությունը բացահայտում է Ծրագրի ակտիվները, պարտավորությունները և զուտ ակտիվները հաշվետու ամսաթվի դրությամբ: Այն պատրաստված է հաշվեգրման սկզբունքի համաձայն, այսինքն՝ գործարքները ճանաչվում են, երբ տեղի են ունենում (և ոչ թե այն դեպքում, երբ գումարը ստացվում կամ վճարվում է):

| | ծնթ. | 31.12.2019թ. USD | 31.12.2018թ. USD |
|---|---|---|---|
| ԱԿՏԻՎՆԵՐ | | | |
| Դրամական միջոցներ | 11 | 972 | 750 |
| Կանխավճարներ | 12 | 27,612,508 | 27,690,160 |
| ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ | | 27,613,480 | 27,690,910 |
| ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | |
| Կրեդիտորական պարտքեր | 13 | 9,055,748 | 9,071,840 |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | 9,055,748 | 9,071,840 |
| ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ | | | |
| Ֆինանսավորում | | | |
| ԱԶԲ 2729-ARM վարկից | 10 | 110,017,341 | 109,373,462 |
| Հայաստանի Հանրապետությունից | | 18,625,019 | 18,422,238 |
| | | 128,642,360 | 127,795,700 |
| Աճողական ծրագրային ծախսեր | | | |
| Ծրագրային ծախսեր | | (105,579,216) | (104,760,907) |
| Տոկոսներ | | (4,000,000) | (4,000,000) |
| | | (109,579,216) | (108,760,907) |
| Փոխարժեքային տարբերությունից կորուստ | | (505,412) | (415,723) |
| ԸՆԴԱՄԵՆԸ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ | | 18,557,732 | 18,619,070 |

5. Ըստ ծրագրի բաղադրիչների ֆոնդերի օգտագործման հաշվետվություն

*ԱՄՆ դոլար*

| Հիմնական բաղադրիչներ | Ծախսումներ | | Ֆինանսավորման աղբյուրը | | Ֆինանսավորման աղբյուրը | |
|---|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը | | ԱԶԲ վարկ թիվ 2729-ARM | ՀՀ ֆինանսա-վորում | ԱԶԲ վարկ թիվ 2729-ARM | ՀՀ ֆինանսա-վորում |
| | Հաշվետու տարի 2019թ. | Կուտակային առ 31.12.2019թ. | Հաշվետու տարի 2019թ. | | Կուտակային առ 31.12.2019թ. | |
| Աշտարակ-Թալին 41.3 կմ երկշարք ճանապարհի վերակառուցում և լայնացում քառաշերտի | - | 110,456,182 | - | - | 96,943,456 | 13,512,726 |
| Ապամոնտաժման աշխատանքներ | - | 146,899 | - | - | - | 146,899 |
| Խորհրդատվական ծառայություններ և ծրագրի կառավարում | 846,512 | 13,622,658 | 643,879 | 202,633 | 9,073,885 | 4,548,773 |
| Տոկոսագումար | - | 4,000,000 | - | - | 4,000,000 | - |
| **Ընդամենը** | **846,512** | **128,225,739** | **643,879** | **202,633** | **110,017,341** | **18,208,398** |

## 6. Վարկային Համաձայնագրի վավերապայմանների համապատասխանություն

ԱԶԲ վարկ թիվ 2729-ARM Վարկային Համաձայնագրի ֆինանսական վավերապայմաններն են (հոդված IV).

| Վավերապայմանի բնութագիրը | Նշումներ |
|---|---|
| Ծրագրի համար առանձին հաշիվների պահպանում | ԱԶԲ Վարկի ֆինանսավորումը ամբողջովին կատարվում է ուղիղ վճարման միջոցով, ուստի՝ ոչ մի առանձին հաշիվ չի պահվում Կազմակերպության կողմից:<br>ՀՀ Կառավարության համաֆինանսավորումը կատարվում է առանձին հաշվով: |
| Տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտ՝ հետևողականորեն կիրառված աուդիտի ստանդարտներին համապատասխան, անկախ աուդիտոր-ների կողմից, որոնց որակավորումները, փորձը և իրավասությունները ընդունելի են ԱԶԲ-ի կողմից: | Ֆինանսական հաշվետվությունները ենթարկվում են աուդիտի՝ ԱՄՍ-ին համապատասխան: Աուդիտորները ընտրվում են այն աուդիտորական ընկերությունների կարճ ցանկից, որոնց որակավորումը և փորձը նախապես հաստատվում է ԱԶԲ-ի կողմից: Աուդիտի պայմանները և շրջանակը նախապես համաձայնեցվում է ԱԶԲ-ի հետ: |
| Մինչև յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից վեց ամիսը, ԱԶԲ-ին տրամադրել աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները: | 31.12.2019թ. ավարտվող տարվա համար ֆինանսական հաշվետվությունները ԱԶԲ-ին նախատեսվում է ներկայացնել մինչև 30.06.2020թ.-ը: |
| ԱԶԲ-ին տրամադրել հաշիվների, ֆինանսական հաշվետվությունների և աուդիտի վերաբերյալ այլ տեղեկատ-վություն, որը ԱԶԲ-ն ժամանակ առ ժամանակ կարող է ողջամտորեն պահանջել: | ԱԶԲ-ի կողմից պահանջված որևէ տեղեկատ-վություն տրամադրվել է պատշաճ ժամկետում: |
| Թույլ տալ ԱԶԲ-ին, նման պահանջի դեպքում, Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները և դրա հետ կապված ֆինանսական հարցերը քննարկել նշանակված աուդիտորի հետ, և լիազորել ու պահանջել աուդիտորի ներկայացուցչի մասնակցել ԱԶԲ-ի կողմից պահանջվող նման քննարկման: | Կազմակերպությունը կհետևի վավերապայման-ներին, երբ նմանատիպ պահանջ կլինի ԱԶԲ-ի կողմից: |
| Կազմակերպությունը պետք է հնարավորություն ընձեռնի ԱԶԲ-ի ներկայացուցիչներին ստուգելու Ծրագիրը, Ապրանքներն ու Աշխատանքները և դրան առնչվող ցանկացած գրանցում ու փաստաթուղթ: | Կազմակերպությունը ընդունում է ԱԶԲ-ի կողմից ցանկացած նման պահանջի կատարում: |

## 7. Ծրագրի իրականացման առաջընթացի հաշվետվություն

| Ծախսային հոդվածներ | 31.12.2019թ. դրությամբ | Բյուջե | Կատարում* |
|---|---|---|---|
| | USD | USD | % |
| Աշխատանքներ | 96,943,456 | 149,700,000 | 65 |
| Խորհրդատվական ծառայություններ | 9,073,885 | 10,000,000 | 91 |
| Տոկոսագումար | 4,000,000 | 4,000,000 | 100 |
| Այլ (ներառյալ տեղական հարկեր) | 18,208,398 | 32,000,000 | 57 |
| Չնախատեսված | - | 8,300,000 | - |
| Ընդամենը | 128,225,739 | 204,000,000 | 63 |

(*) Վարկային համաձայնագիրը կնքվել է 2011թ. մայիսի 30-ին, և Վարկի տրամադրման վերջնաժամկետը նախապես սահմանված է եղել 2014թ. դեկտեմբերի 31-ը: Այն սկզբում երկարաձգվել է մինչև 2017թ. հունիսի 30-ը, իսկ հետագայում՝ մինչև 2019թ. սեպտեմբերի 14-ը:
27.05.2019թ.-ին ՀՀ Ֆինանսների նախարարությունը դիմել է ԱԶԲ-ին փակման ժամկետը երկարաձգելու մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ը:
Տրանշ 2-ի տրամադրման վերջնաժամկետ է սահմանվել 2023թ. դեկտեմբերի 31-ը:

Չնայած 31.12.2019թ.-ի դրությամբ իրականացվել է նախատեսված վճարումների 63%-ը, սակայն ավարտվել է աշխատանքների ընդամենը 54%-ը՝ հաշվի առնելով տրված կանխավճարները (ծնթ. 12) և կրեդիտորական պարտքերը (ծնթ. 13):
Տրանշ 2-ի դանդաղ ընթացքի պատճառներից է.

- ՀՕՏՕ-ի իրականացման հետ կապված, «Ազարակ» պատմամշակույթային արգելոցի պահպանման գոտու տարածքում հայտնաբերված հուշարձանները շրջանցող նոր ճանապարհի մոտ 8 կմ հատվածի նախագծի հաստատումը և դրա հետ կապված հողերի օտարումը: ՀՀ կառավարության 23.05.2019թ. N 626-Ն որոշմամբ՝ Աշտարակ-Թալին ճանապարհահատվածի մաս հանդիսացող՝ ՀՀ Արագածոտնի մարզի Ազարակի համայնքի մոտ հնագիտական տեղանքը շրջանցող մոտ 8 կմ ճանապարհահատվածի (կմ 29+600-կմ 37+544.68) օտարման գոտու սահմաններում գտնվող հողամասերը ճանաչվել են հանրության՝ գերակա շահ:
- Հաղորդակցուղիների տեղափոխման աշխատանքների հետ կապված ի հայտ են եկել շինհրապարակի տրամադրման խնդիրներ: Քանի որ տեղափոխվող հաղորդակցուղիները ենթակա են տեղադրման այլ անձանց սեփականությունը հանդիսացող հողամասերի տարածքներում, ճանապարհի որոշակի հատվածներում աշխատանքները ժամանակավորապես կասեցվել են: 2019 թվականին ՀՕՏ մասով ԱԶԲ հաստատմանն է ներկայացվել 2 փաստաթուղթ՝ ՀՕՏՕ լրացում Կոշ-Շամիրամ 7 կմ հատվածի համար (հաղորդակցուղիների տեղափոխում) և ՀՕՏՕ լրացում Ազարակի 8 կմ հատվածի համար (հնագիտական տեղանքի շրջանցում), որոնք մինչ օրս գտնվում են ԱԶԲ-ի կողմից ուսումնասիրման և հաստատման փուլում, մինչդեռ 2019թ.-ին նախատեսվում էր ստանալ այդ փաստաթղթերի հաստատումը և մեկնարկել ՀՕՏՕ-ի իրականացումը:
- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կապալառուն դադարեցրել է շինարարական աշխատանքները՝ սկսած 2018-ի տարեվերջից և լքել է Հայաստանը՝ 2019 թվականի հուլիսի 18-ին «Կորսան-Կորվիամ Կոնստրուկսիոն» իսպանական ընկերությանը ծանուցվել է պայմանագիրը լուծելու մասին՝ կապալառուի կողմից պայմանագրի դրույթների բազմաթիվ խախտումների, ինչպես նաև վերջինիս անվճարունակ լինելու պատճառով: 2019 թվականի նոյեմբերին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից Առևտրի միջազգային պալատ է ներկայացվել դիմում «Կորսան-Կորվիամ Կոնստրուկսիոն» բաժնետիրական ընկերության նկատմամբ արբիտրաժային գործընթաց

սկսելու վերաբերյալ: Արբիտրաժային գործընթացն ընթացքի մեջ է:

## 8. Ծրագրի ծախսումների կուտակային հաշվետվություն

*ԱՄՆ դոլար*

| Հոդվածներ | Փաստացի | | Նախատեսված | | Շեղում | |
|---|---|---|---|---|---|---|
| | Հաշվետու տարի | Ամողական առ | Հաշվետու տարի | Ամողական առ | Հաշվետու տարի | Ամողական առ |
| | 2019թ. | 31.12.2019թ. | 2019թ. | 31.12.2019թ. | 2019թ. | 31.12.2019թ. |
| Աշխատանքներ | - | 96,943,456 | - | 96,943,456 | - | - |
| Խորհրդատվական ծառայություններ | 643,879 | 9,073,885 | 1,009,529 | 9,444,516 | (365,650) | (370,631) |
| Տոկոսագումար | | 4,000,000 | - | 4,000,000 | - | - |
| Այլ (հարկեր) | 190,700 | 18,044,585 | 502,665 | 18,356,550 | (311,965) | (311,965) |
| Այլ աշխատանքներ (Գովազդային վահանակների ապամոնտաժում) | - | 146,899 | - | 146,899 | - | - |
| Այլ խորհրդատվական ծառայություններ | 11,933 | 16,914 | - | - | 11,933 | 16,914 |
| **Ընդամենը** | **846,512** | **128,225,739** | **1,512,194** | **128,891,421** | **(665,682)** | **(665,682)** |

## 9. Փաստացի մասհանումների մասին հաշվետվություն

*ԱՄՆ դոլար*

| Հիմնական բաղադրիչներ | Հաշվետու տարի 2019թ. | | | Կուտակային առ 31.12.2019թ. | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ԱԶԲ վարկ թիվ 2729-ARM | ՀՀ ֆինանսա-վորում | Ընդամենը | ԱԶԲ վարկ թիվ 2729-ARM | ՀՀ ֆինանսա-վորում | Ընդամենը |
| Աշխատանքներ | - | - | - | 96,943,456 | 13,512,726 | **110,456,182** |
| Խորհրդատվական ծառայություններ | 643,879 | 190,700 | **834,579** | 9,073,885 | 4,531,859 | **13,605,744** |
| Տոկոսագումար | - | - | - | 4,000,000 | - | **4,000,000** |
| Այլ աշխատանք-ներ (Գովազդային վահանակների ապամոնտաժում) | - | - | - | - | 146,899 | **146,899** |
| Այլ խորհրդատվական ծառայություններ | - | 11,933 | **11,933** | - | 16,914 | **16,914** |
| Ընդամենը | 643,879 | 202,633 | 846,512 | 110,017,341 | 18,208,398 | 128,225,739 |

## 10. ԱՁԲ 2729-ARM վարկի ֆինանսավորում

| | Հաշվետու տարի 2019թ. USD | Ամողական առ 31.12.2019 USD |
|---|---|---|
| Ուղիղ վճարում | 643,879 | 106,017,341 |
| Տոկոսագումարի առհանում | - | 4,000,000 |
| Ընդամենը | 643,879 | 110,017,341 |

## 11. Դրամական միջոցներ

| | առ 31.12.2019թ. USD | առ 31.12.2018թ. USD |
|---|---|---|
| Ընթացիկ հաշիվ, ՀՀ համաֆինանսավորում, ՀՀ դրամ | 972 | 750 |
| Ընդամենը | 972 | 750 |

## 12. Կանխավճարներ

| Կանխավճարներ | առ 31.12.2019թ. USD | առ 31.12.2018թ. USD |
|---|---|---|
| Շինարարական աշխատանքների գծով* | 27,612,508 | 27,612,508 |
| Խորհրդատվության գծով | - | 77,652 |
| Ընդամենը | 27,612,508 | 27,690,160 |

(*) Հաշվետու ամսաթվով առկա կանխավճարները վերաբերվում են Corsan Corviam Construccion S.A.-ին վճարված կանխավճարին: (ծնթ. 7)

## 13. Կրեդիտորական պարտքեր

| Կրեդիտորական պարտքեր | 31.12.2019թ. USD | 31.12.2018թ. USD |
|---|---|---|
| Հետերաշխիքային գումարներ* | 9,054,371 | 8,977,715 |
| Խորհրդատվության գծով /հարկային պարտավորություններ/ | - | 94,125 |
| Այլ խորհրդատվության գծով | 1,377 | - |
| Ընդամենը | 9,055,748 | 9,071,840 |

(*) Հետերաշխիքային գումարները պահվում են շինարարական աշխատանքների գծով ներկայացված հաշիվների 10%-ի չափով, որից 5%-ը ենթակա է վճարման շինարարական աշխատանքի ընդունման վկայագրի հաստատումից հետո, իսկ մնացած 5%-ը՝ վկայագրի ընդունումից մեկ տարի հետո:

## 14. Դատական հայցեր

Հաշվետու ամսաթվի և այս ֆինանսական հաշվետվության հաստատման ամսաթվի դրությամբ առկա են հինգ դատական հայցեր, որոնք հիմնականում վերաբերվում են ՀՕՏՓ-ին (ծնթ. 1.5):
ՀՕՏՓ-ն ամբողջությամբ ֆինանսավորվում է ՀՀ Կառավարության միջոցներից, և դրա գծով ֆինանսական հոսքերը այս ֆինանսական հաշվետվությունում ներկայացվում են միայն որպես

տեղակատվություն, և չեն ներառվում Ծրագրի դրամական միջոցների ստացումների և ծախսումների հաշվետվությունում:
Ծրագրի ղեկավարության կարծիքով, նշված դատական հայցերը չունեն էական ազդեցություն այս ֆինանսական հաշվետվությունների վրա:

## 15. Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր

Հաշվի առնելով նոր տիպի կորոնավիրուսի (COVID-19) լայն աշխարհագրական տարածումը 2020թ.-ի ընթացքում, ինչպես նաև Հայաստանի ամբողջ տարածքում 2020 թվականի մարտի 16-ից մինչև ապրիլի 14-ը արտակարգ դրություն սահմանելու մասին ՀՀ Կառավարության որոշումը՝ Ծրագրի ղեկավարությունը գտնում է, որ ստեղծված իրավիճակը կարող է որոշ ազդեցություն ունենալ Ծրագրի ընթացքի վրա, մասնավորապես այն կարող է ազդել.

- Աշխատանքների իրականացման ժամկետների վրա,
- Ի հայտ բերել Ծրագրի համակարգման դժվարություններ, և
- Սահմանափակումներից բխող այլ բացասական հետևանքներ:

Ելնելով իրադարձությունների զարգացման անկանխատեսելիությունից՝ Ծրագրի ղեկավարությունը հնարավոր չի համարում գնահատել վերոնշյալ դեպքի ֆինանսական հետևանքը հաշվետվությունների վրա:

## ՀԱՎԵԼՎԱԾ. ԾԱԽՍՈՒՄՆԵՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԸՍՏ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

*Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 2*
*ԱԶԲ վարկ թիվ 2729-ARM*
*2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ*
*ԱՄՆ դոլար*

| Նկարագրություն | Վճարված գումար | Պայմանագրի անվանում |
|---|---|---|
| Խորհրդատվական ծառայություններ | | |
| Ծրագրի կառավարման խորհրդատու | 556,907 | Խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագիր՝ 18.05.2012թ. |
| Աուդիտորական խորհրդատվություն | 10,605 | Աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագիր 16.10.2017 02CS0004 |
| Ակտիվների գույքագրման, գնահատման, չափման աշխատանքներ | 76,367 | Խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագիր ADB/NS/CS/CQS/2018-1, 15.11.2018 |
| *Ընդամենը խորհրդատվական ծառայություններ (ԱԶԲ ֆինանսավորմամբ)* | *643,879* | |
| Աուդիտորական խորհրդատվություն (ՀՀ Կառավարության ֆինանսավորմամբ, Տրանշ 1) | 5,000 | Աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագիր 2019/1ՖԱ/08-Ա, 19.03.2019 |
| Հեղինակային հսկողության ծառայություն (ՀՀ Կառավարության ֆինանսավորմամբ) | 6,933 | Պայմանագիր ՏԾԻԿ-ԾԶԲ-2019/3ՀՀ, 17.06.2019թ. |
| *Ընդամենը խորհրդատվական ծառայություններ* | *655,812* | |
| Հարկեր և տուրքեր | | |
| Ծրագրի կառավարման խորհրդատու | 183,580 | Խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագիր՝ 18.05.2012թ. |
| Աուդիտորական խորհրդատվություն | 2,120 | Աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագիր 16.10.2017թ. 02CS0004 |
| Արբիտրաժին վճարումներ | 5,000 | |
| *Ընդամենը հարկեր* | *190,700* | |
| Ընդամենը ծախսեր | 846,512 | |

# ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՈՒԴԻՏՈՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

31 մարտի 2020

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ
Դավիթ Անհաղթի 23/6, 5-րդ հարկ
Երևան, Հայաստան

Հավաստումների սույն զրույթը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) միջև կնքված 2729-ARM վարկային համաձայնագրով (Վարկային Համաձայնագիր) ֆինանսավորվող և Կազմակերպության կողմից իրականացվող "Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի–Ծրագիր 2"-ի (Ծրագիր) 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտի առնչությամբ:

*Մենք գիտակցում ենք մեր պատասխանատվությունը, որ.*

- Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքի,
- Հաշվապահական հաշիվները և ֆինանսական փաստաթղթերը ճշգրիտ են և ամբողջական, և ներկայացնում են իրական փաստերը Ծրագրի նպատակներին և ազգային օրենսդրությանը համապատասխան:
- ներքին վերահսկողության ձևավորում և իրականացում խարդախությունը կանխելու և հայտնաբերելու նպատակով,
- Ծրագրի վերաբերյալ ստացված կամ մեր կողմից ֆինանսավորման հետ կապված տեղեկատվության ամբողջականությունը և համապատասխանությունը,
- ցանկացած տեղեկատվության և բացահատումների առկայություն, բանավոր կամ գրավոր հաստատմամբ, որոնք կարող են պահանջվել աուդիտորի կողմից աուդիտի իրականացման ընթացքում:

*Մեր գիտելիքներն ու համոզվածությունը հիմք ընդունելով՝ հավաստում ենք, որ.*

- Մենք Ձեզ տրամադրել ենք բոլոր հաշվապահական գրքերը և օժանդակ փաստաթղթերը:
- Չկան էական գործարքներ, որոնք պատշաճ կերպով գրանցված չեն եղել Ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած հաշվապահական հաշվառման հաշիվներում:
- Ներքին հսկողության համակարգը հուսալի է. Ֆինանսական և այլ փաստաթղթերի հաստատումը և վերահսկողությունը, պարտականությունների տարանջատումը կատարվում է պատշաճ կերպով:
- Ծրագրի միջոցներն օգտագործվել են համաձայն սահմանված բյուջեի:
- Ֆինանսական գործարքներն իրականացվում են ծրագրի նպատակներին և ֆինանսավորման համաձայնագրի պայմաններին համապատասխան:
- Ֆինանսական միջոցները օգտագործվել են խնայողական և արդյունավետ եղանակով:
- Չի եղել որևէ խախտում ղեկավար կազմի կամ աշխատակիցների ներգրավման մեջ, որոնք նշանակալի դեր ունեն հաշվապահական հաշվառման և ներքին հսկողության համակարգերում, և որը կարող է էական ազդեցություն ունենալ ֆինանսական հաշվետվությունների վրա:
- Ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական սխալներից և բացթողումներից:
- Չեն գրանցվել վերահսկող կազմակերպությունների կողմից հակաօրինական փաստերի կամ խախտումների բացահայտում, որոնք էական ազդեցություն կունենային ֆինանսական հաշվետվությունների վրա:

- ֆինանսական հաշվետվությունների ամսաթվից հետո որևէ իրադարձություն չի եղել, որը պահանջում է ճշգրտում կամ բացահայտում ֆինանսական հաշվետվություններում:
- Փաստացի կամ սպասվելիք հայցերը պարզաբանվել են:
- Մեր կողմից չեն բացահայտվել խարդախության փաստացի կամ կասկածելի դեպքեր, որոնք ազդում են Ծրագրի վրա և կապված են հետևյալ անձանց հետ.
  ա. Ղեկավարություն,
  բ. Ներքին հսկողության գործում նշանակալի դեր ունեցող աշխատակիցներ, կամ
  գ. այլ անձինք, եթե խարդախության դեպքը կարող է էական ազդեցություն ունենալ ֆինանսական հաշվետվությունների (համախմբված) վրա:

Քրիստինե Ղալեչյան
Գլխավոր տնօրենի Ժ/Պ

Նարինե Միքաելյան
Ֆինանսական կառավարման և հաշվապահական հաշվառման բաժնի պետ / գլխավոր հաշվապահ